



ADVANCED  
SOCIAL  
TECHNOLOGIES

# Օգուտների Բաշխման Վերլուծություն

*ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ*

**ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ  
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Հայաստան

Դեկտեմբեր 2012թ.

## Բովանդակություն

ՍԵՂՄԱԳԻՐ.....	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	4
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ և ՔՆԱՐԿՈՒՄ.....	7
Կրթություն.....	7
Առողջապահություն.....	14
Ջրային տնտեսության ոլորտ.....	24
Աղյուսակ 1: Օգուտների բաշխումը կրթության ոլորտում, 2012թ.....	7
Աղյուսակ 2: Պետական բյուջեի հատկացումներն ըստ կրթության ենթա-ոլորտների.....	8
Աղյուսակ 3: Կրթության ընդհանուր ծախսերի օգուտների բաշխումը.....	8
Աղյուսակ 4: Տնային տնտեսության միջին մեծությունն ըստ քվինտիլների, 2012թ. ....	9
Աղյուսակ 5: Երեխաների ծնունդների մասով SS հարցման արդյունքները, %.....	14
Աղյուսակ 6: Կառավարությունից ամբողջովին կամ մասնակի անվճար առողջապահական ծառայություններ ստացողների տեսակարար կշիռն ըստ քվինտիլների.....	17
Աղյուսակ 7: 2012թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի.....	18
Աղյուսակ 8: 2010թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի տեսակների.....	18
Աղյուսակ 9: 2009թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի տեսակների.....	18
Աղյուսակ 10. 2008թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի.....	19
Աղյուսակ 11: Ծառայությունների սպառումն ըստ առողջապահական ծրագրերի, 2008-2012թթ. ....	20
Աղյուսակ 12: Ծառայությունների սպառման մասանաբաժինն ըստ քաղաքային և գյուղական հատվածների.....	21
Աղյուսակ 13: Հարցվածների շրջանում ծառայությունների շահառուների մասանաբաժնի բաշխումն ըստ քաղաքային և գյուղական հատվածների.....	22
Աղյուսակ 14: Ծառայությունների բաշխումն ըստ ծրագրերի և քվինտիլների, 2008-2012թթ.....	22
Աղյուսակ 15: Բյուջեի հատկացումներն ըստ քվինտիլների և տարիների.....	23
Աղյուսակ 16: Ջրային ծառայություններից օգտվողների տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության մեջ` ըստ ջրային ծառայությունների տեսակների և ծախսային քվինտիլների, 2008թ.....	24
Աղյուսակ 17. Ջրային ծառայությունների տեսակների օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, 2008թ.....	24
Աղյուսակ 18. Միավորի սուբսիդավորման դինամիկան 2008-2012թթ.....	27
Աղյուսակ 19: Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2008թ.....	28
Աղյուսակ 20: Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2009թ.....	28

Աղյուսակ 21. Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2011թ.....	28
Աղյուսակ 22: Օգուտների բաշխումը 2008-2012թթ.....	28
Աղյուսակ 23: Օգուտների բաշխման դինամիկան (ծառայությունների սպառում), 2008-2012թթ. ....	30
Գծապատկեր 1: Օգուտների բաշխումը միջնակարգ ընդհանուր կրթության համար ըստ աղքատության քվինտիլների՝ 2008-2012թթ. համար .....	9
Գծապատկեր 2: Միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ աղքատության քվինտիլների, 2008-2012թթ.....	10
Գծապատկեր 3: Մասնագիտական արհեստագործական կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ քվինտիլների 2008-2012թթ.....	11
Գծապատկեր 4. Պետության կողմից ֆինանսավորվող բարձրագույն և հետբուհական կրթության ծառայությունների օգուտների բաշխումն ըստ քվինտիլների՝ 2008-2012թթ. ժամանակահատվածի համար.....	12
Գծապատկեր 5. Բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, 2008-2012թթ.....	12
Գծապատկեր 7: Օգուտների բաշխումը երեխաների ծնունդների ոլորտում, 2008-2012թթ..	15
Գծապատկեր 8: Երեխաների ծնունդները 2007-2012թթ.....	15
Գծապատկեր 8: Առողջապահական ծառայությունների շահառուները 2008-2012թթ. ըստ քվինտիլների .....	17
Գծապատկեր 9: Առողջապահական ծառայությունների ընդհանուր սպառումն ըստ քվինտիլների, 2008-2012թթ.....	19
Գծապատկեր 10: Անվճար կամ մասնակի անվճար առողջապահական ծառայությունների շահառուների մասնաբաժինն ըստ տարիների .....	21
Գծապատկեր 11: Ոռոգման օգուտների բաշխում .....	25
Գծապատկեր 12: Ջրահեռացման օգուտների բաշխում.....	25
Գծապատկեր 13: Ջրամատակարարման ծառայություններին մատչումի դինամիկան ըստ քվինտիլների, 2008-2012թթ.....	26
Գծապատկեր 14: Ջրային ոլորտի բյուջետային ծրագրերի օգուտների բաշխումը 2008-2012թթ. ....	29
Գծապատկեր 15: Օգուտների բաշխումը՝ հիմնված մեկ շնչի հաշվով ջրի սպառման վրա, 2008-2012թթ.....	31

## ՄԵՂՄԱԳԻՐ

Սույն հաշվետվությունը փորձում է բացահայտել կրթական, առողջապահական և ջրային ոլորտներում հանրային ծառայությունների բաշխումը բնակչությանը՝ տարանջատված ըստ ծախսային քվինտիլների: Հաշվետվության նպատակն է տեղեկացնել որոշումներ ընդունողներին առկա քաղաքականություններով միջամտությունների արդյունավետության մասին՝ Հայաստանի ամբողջ բնակչության աղքատ քվինտիլների միջև պետական բյուջեի ծրագրերի օգուտների բաշխման տեսանկյունից: Այս հաշվետվությունը պարունակում է 2009 և 2010թթ. մշակված ՕԲՎ հաշվետվությանը նմանատիպ տեղեկատվություն, սակայն սույն թարմացված հաշվետվությունում ներկայացված է լրացուցիչ դինամիկ վերլուծություն՝ օգուտների բաշխման վերաբերյալ:

## ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակվել է՝ հիմնվելով նախկինում կիրառված մեթոդաբանության վրա և սերտորեն կապված է Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաների կողմից նախկինում մշակված ծրագրային բյուջետավորման և օգուտների բաշխման հաշվետվությունների հետ<sup>1</sup>. Ծրագրերի, դրանց կառուցվածքի և դասակարգման մեթոդների մասին օժանդակ տեղեկատվությունը ներկայացված է Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության հաշվետվությունում, որն իրականացվել է ԱՍՏ-ի կողմից՝ սույն հաշվետվությանը զուգահեռ:

Տարբեր աղքատ քվինտիլների կողմից պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի և ծառայությունների սպառման մակարդակն ստանալու նպատակով ԱՍՏ-ն իրականացրել է ուսումնասիրություն, որը կազմակերպությանը թույլ է տվել գնահատել պետական բյուջեի ծրագրերի արդյունավետությունն ընտրված ոլորտներում՝ վերջնական շահառուի տեսանկյունից: Ի տարբերություն արդյունավետության վերլուծության որոշ այլ տեսակների, ինչպիսին է, օրինակ՝ ծախսերի արդյունավետությունը, օգուտների բաշխման վերլուծությունը պահանջում է դաշտային գործողություններ և տեղեկատվության հավաքագրում վերջնական շահառուներից: Նաև, չնայած այն փաստին, որ Հայաստանում պետական բյուջեի մասին տեղեկատվությունը բավականին թափանցիկ է, առկա են բարդություններ կապված որոշակի ընտրված տիպի տվյալների հետ, որոնց ստանացումն առաջնայնորեն պահանջում է ուսումնասիրությունների իրականացում: Երկրում դեռևս առկա է պետական բյուջեից ֆինանսավորվող այնպիսի գործողությունների պակաս, որոնց արդյունքում կձևավորվեն հետադարձ տվյալներ՝ կառավարության ծրագրերի շրջանակներում ծառայությունների սպառման վերաբերյալ: Այդպիսով, ԱՍՏ-ն ստիպված էր ձեռք բերել որոշ առաջնային տվյալներ՝ սույն օգուտների բաշխման վերլուծությունում օգտագործելու նպատակով:

Ուսումնասիրությունը կատարվել է 2012թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին և ընդգրկել է 2012թ. ընթացքում ծառայությունների սպառման գնահատումը: Կիրառված մեթոդաբանությունը և հարցաշարը նույնական են եղել նախկինում կիրառվածներին (որոշակի հատուկ փոփոխություններով/լրացումներով՝ որոշ հիպոթեզների գնահատման լրացուցիչ պահանջներն արտացոլելու նպատակով, ինչպիսին են, օրինակ ԲՈՒՀ-երին

<sup>1</sup> Տես ԾԲՎ և ՕԲՎ հաշվետվություններ 2009թ. և 2010թ., Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ, [www.ast.am](http://www.ast.am)

մատչում ստանալու հարցում մասնավոր ուսուցիչների և պետական դպրոցների ծառայություններից օգտվելու ծախսերի և արդյունավետության համեմատությունը): **Մեթոդաբանության նման կայունությունը թույլ տվեց բարելավել սույն հաշվետվությունը՝ ներկայացնելով դինամիկ պատկեր և օգուտների բաշխման սխեմաների համեմատություն 4 տարբեր ժամանակահատվածների համար (2008, 2009, 2010 և 2012թթ.):** Այսպիսով, սույն հաշվետվությունում հիմնականում կկենտրոնանանք վերը նշված դինամիկայի և սխեմաներում նկատելի շարժերի հնարավոր պատճառների ներկայացման ուղղությամբ:

Գործընթացին օժանդակելու նպատակով մշակվել է հատուկ հարցաշար: Հայաստանի տարբեր մասերից (քաղաքային և գյուղական) հարցմանը մասնակցել են 1600 տնային տնտեսություններ: Քվինտիլները սահմանվել են պարզ բաժանման միջոցով՝ 320 տնային տնտեսություններ<sup>2</sup> յուրաքանչյուր քվինտիլում: Ըստ ծախսային մակարդակների քվինտիլները սահմանվել են հետևյալ կերպ.

<i>Քվինտիլ</i>	<i>Մասական ծախսեր, ՏՏ մեկ շնչի հաշվով</i>
Քվինտիլ 1	Մինչև 34543 դրամ
Քվինտիլ 2	34543 -56916 դրամ
Քվինտիլ 3	56916 -61583 դրամ
Քվինտիլ 4	61583 -95202 դրամ
Քվինտիլ 5	95202 դրամից ավելի

Օգուտի բաշխման բացահայտման գործընթացը ներառել է հետևյալ փուլերը.

- Սահմանված ծրագրերի համար յուրաքանչյուր ծառայության սպառման մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում (հարցման արդյունքներ<sup>3</sup>),
- Արդյունքների բաշխում ըստ յուրաքանչյուր քվինտիլի,
- Օգուտի արձանագրման յուրաքանչյուր դեպքի մասնաբաժնի հաշվարկում ընդհանուր ծախսերի մեջ՝ ըստ ծրագրերի և քվինտիլների,
- Վերջին հարցման արդյունքների համեմատում նախկինում արձանագրված դինամիկայի հետ և զգալի փոփոխությունների պատճառների վերաբերյալ բացատրությունների և ենթադրությունների տրամադրում:

ՕԲՎ համար ծրագրերն սահմանելիս մենք կիրառել ենք ԾԲՎ հաշվետվության ծրագրերի կառուցվածքը: Սակայն, ՕԲՎ նպատակների համար բացառվել են ներքին ծառայությունները (կամ աջակից/օժանդակ ծառայությունները), որոնք ուղղակիորեն չեն վերագրվում այն արտաքին ծառայություններին, որոնք տնային տնտեսությունները ստանում են կառավարությունից, օրինակ՝ Քաղաքականության մշակման և վարչարարության ծրագրերը, որոնց ծառայությունների սպառման մակարդակի վերաբերյալ տնային տնտեսությունները չեն կարող տալ լիարժեք արձագանքներ: Նմանապես, Աղյուսակների մեծամասնությունից բացառվել են նաև Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ ծրագրի տվյալները, քանի որ, որպես բնակչության կողմից ուղղակիորեն սպառվող ծառայություն, այն ունեցել է պատասխանների աննշան մակարդակ: Չնայած այն փաստին, որ հարցման հարցաշարը ներառել է և՛ հանրային և՛ մասնավոր ծառայություն մատուցողների ծառայությունների բաշխումը, սույն հաշվետվությունը տեղեկատվություն է տրամադրում այնպիսի ծառայությունների օգուտների բաշխման վերաբերյալ, որոնք ունեն հանրային ֆինանսավորում (լիարժեք կամ

<sup>2</sup> 1600 բաժանված 5 քվինտիլներով

<sup>3</sup> Հարցումը կատարվել է 2012թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին

մասնակի), քանի որ հաշվետվությունն ավելի շատ նպատակ ունի բնութագրելու կառավարության ծախսերի՝ դեպի աղքատներն ուղղվածությունը (հանրային ծախսերի արդյունավետության տեսանկյունից), քան՝ հասարակության վարքի ընդհանուր մոդելը:

# ԱՐՁԱՆՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## Կրթություն

Ինչպես և Օգուտների Բաշխման Վերլուծության նախկին տարբերակներում, երկրում ամենակարևոր կրթական ծրագրերն են՝ Միջնակարգ ընդհանուր կրթությունը (տարրական դպրոց, միջնակարգ դպրոց և ավագ դպրոց), Մասնագիտական (արհեստագործական) կրթությունը և Բարձրագույն և հետբուհական կրթությունը: Բնակչության միջև օգուտների բաշխման նման կառուցվածքը համահունչ է ծրագրային բյուջետավորման վերլուծության (ՕԲՎ<sup>4</sup>) ծրագրերի դասակարգման հիմնական բաղադրիչների հետ:

2012թ. իրականացված հարցման արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1: Օգուտների բաշխումը կրթության ոլորտում, 2012թ.

	Ք1	Ք2	Ք3	Ք4	Ք5
Միջնակարգ ընդհանուր կրթություն	27%	25%	19%	15%	13%
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական արհեստագործական կրթություն	20%	16%	14%	25%	25%
Բարձրագույն և հետբուհական կրթություն	5%	15%	23%	23%	33%

Ինչպես և նախորդ տարիներին, նկատում ենք միջնակարգ ընդհանուր կրթության՝ զգալիորեն դեպի աղքատներն ուղղված բաշխում, որը նախկինում և ներկայում բացատրվում է աղքատ ընտանիքների ժողովրդագրական պատկերով, որոնք իրենց տնային տնտեսություններում ունեն ավելի մեծ թվով երեխաներ՝ այդպիսով ավելի մեծ դերակատարում ունենալով երկրում օգուտների բաշխման ընդհանուր պատկերում:

Մասնագիտական արհեստագործական կրթության ոլորտում օգուտների բաշխման պատկերն ավելի շատ ունի Ս տեսք՝ ծայրերին մոտ ծառայությունների ավելի մեծ սպառումով:

Վերջապես, բարձրագույն և հետբուհական կրթությունն, ինչպես և նախորդ տարիներին, ունի դեպի հարուստներն ուղղվածության շատ բարձր մակարդակ, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով, ինչպիսիք են. հարուստ տնային տնտեսությունների՝ պետական ֆինանսավորում ունեցող կրթությանը մատչում ունենալու ավելի բարձր հավանականություն՝ ընդունելության քննություններից առաջ մասնավոր ուսուցիչներ ներգրավելու հնարավորության հետևանքով, ինչպես նաև ապագա օգուտների համար

<sup>4</sup> Տես ՕԲՎ հաշվետվություններ 2009թ., 2010թ. և 2012թ., Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ, [www.ast.am](http://www.ast.am)

կրթության մեջ ավելի շատ ներդրումներ անելու՝ ավելի հարուստ ընտանիքների նույնանման վարքագիծն ամբողջ աշխարհում:

Ամփոփելով կարելի է նշել, որ տեսնում ենք բավականին տրամաբանական (չնայած ոչ ողջունելի) օգուտների բաշխում ըստ քվինտիլների և կրթության տեսակների: Կրթության ոլորտին ուղղվող հանրային միջոցների ընդհանուր օգուտների բաշխումը գնահատելու համար անհրաժեշտ է կատարել ծառայությունների սպառման բաշխման կշռում կառավարության ծախսերի հետ ըստ ոլորտների, այսինքն՝ գնահատել կառավարության ծախսերի չափաբաժինն (ֆինանսական միջոցների բաշխման տեսանկյունից) ըստ քվինտիլների՝ ամբողջ կրթական ոլորտի համար:

**Աղյուսակ 2: Պետական բյուջեի հատկացումներն ըստ կրթության ենթա-ոլորտների**

Հազ. դրամ	2012թ. Պետ. բյուջե
Միջնակարգ ընդհանուր կրթություն	87,588,132
Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական արհեստագործական կրթություն	5,260,893
Բարձրագույն և հետբուհական կրթություն	8,173,122

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերը նշված գնահատումը՝ օգտագործելով 2012թ. կրթական ոլորտին հատկացված պետական բյուջեի միջոցները (տես Աղյուսակ 2) և ծառայությունների սպառումը (տես Աղյուսակ 1):

**Աղյուսակ 3: Կրթության ընդհանուր ծախսերի օգուտների բաշխումը**

	Ք1	Ք2	Ք3	Ք4	Ք5
2012թ. բյուջեի հատկացումներ, հազ. դրամ	25,520,015	23,748,994	19,625,547	16,560,404	15,567,187
Կրթության ընդհանուր ծախսերի օգուտների բաշխում	25%	24%	19%	16%	15%

Այսպիսով, այժմ մենք նկատում ենք թեթև շարժ դեպի ավելի հավասարաչափ բաշխում, սակայն՝ դեռևս ավելի մոտ միջնակարգ ընդհանուր կրթության դեպքում նկարագրված բաշխմանը, քանի որ վերը նշված երեք ենթա-ոլորտներին հատկացված ընդհանուր միջոցներում միջնակարգ ընդհանուր կրթության կշիռը կազմում է 85%:


Այդ իսկ պատճառով, որպես ամփոփիչ եզրակացություն կարող ենք նշել, որ Հայաստանում կրթության ոլորտին ուղղվող պետական բյուջեի հատկացումներն ունեն դեպի աղքատներն ուղղվածության բացահայտ տեսք:

Ստորև բերված գծապատկերներում կներկայացնենք օգուտների բաշխման դինամիկ պատկերը (ծառայությունների սպառում) վերջին 4 տարիների ընթացքում (համաձայն



ՉՀՑ (GDN) «Հանրային ծախսերի հաշվետվողականության բարելավման նպատակով ինստիտուտների զարգացման» ծրագրի շրջանակներում ԱՄՏ-ի կողմից իրականացված հարցումների):

Գծապատկեր 1: Օգուտների բաշխումը միջնակարգ ընդհանուր կրթության համար ըստ աղքատության քվինտիլների՝ 2008-2012թթ. համար




Ինչպես տեսնում ենք, միջնակարգ ընդհանուր կրթության օգուտների բաշխման դինամիկան շատ կայուն է՝ դեպի ավելի աղքատներին միտված բաշխման կողմ թեթև շարժով: Սակայն, քանի որ Հայաստանում միջնակարգ ընդհանուր կրթության համար անհրաժեշտ չեն զգալի ներդրումներ (հատկացումներ) տնային տնտեսությունների կողմից, ապա այստեղ առաջնային ենթադրությունը/բացատրությունը ժողովրդագրությունն է: Ստորև ներկայացված աղյուսակը (տես Աղյուսակ 4) ցույց է տալիս տնային տնտեսության միջին մեծությունն ըստ քվինտիլների:

Աղյուսակ 4: Տնային տնտեսության միջին մեծությունն ըստ քվինտիլների, 2012թ.

	Ք1	Ք2	Ք3	Ք4	Ք5
SS միջին մեծությունը	5.15	4.63	4.19	3.83	3.56

Նույն տվյալները կարելի է ներկայացնել նաև դինամիկայի մեջ՝ ըստ առանձին քվինտիլների, որպեսզի դիտարկենք բաշխման փոփոխությունները (տես Գծապատկեր 2):


Գծապատկեր 2: Միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ աղքատության քվինտիլների, 2008-2012թթ.



Վերը բերված գծապատկերում տեսնում ենք, որ առաջին քվինտիլը բարելավել է իր դիրքերը, սակայն բարելավումը եղել է ոչ միայն վերջին քվինտիլի, այլ երկու ամենահարուստ քվինտիլների հաշվին, մինչդեռ 2-րդ և 3-րդ քվինտիլները ցուցաբերել են քիչ թե շատ կայուն վարք:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական արհեստագործական կրթության ծառայությունների դինամիկան նույն ժամանակահատվածում ցուցաբերել է պակաս կայուն վարք, չնայած նման փոփոխականությունը նկատվում է հիմնականում վերջին հարցման արդյունքներում: Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության փորձագետների հետ նախնական քննարկման, վերջին շրջանում (2011-2012թթ.) արձանագրված նման վարքի բացատրություն կարող են հանդիսանալ երկու հիմնական գործոն (դեռևս առանց պաշտոնապես իրականացված պատշաճ վերլուծության). միջին մասնագիտական կրթական հաստատություններում պետական բյուջեից ֆինանսավորվող տեղերի թվի ավելացում 50%-ով և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված հատուկ գովազդային արշավներ՝ միջին մասնագիտական կրթությունն ավելի գրավիչ դարձնելու նպատակով: Այս երկու գործոնները կարող են ազդել բոլոր քվինտիլներում, այդ թվում՝ ավելի հարուստ քվինտիլներում, որոշումների ընդունման վրա՝ կապված միջին մասնագիտական կրթական հաստատությունները որպես բարձրագույն կրթության համակարգերի ցատկահարթակ օգտագործելու հետ:

Գծապատկեր 3: Մասնագիտական արհեստագործական կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ քվինտիլների 2008-2012թթ.




Բարձրագույն և հետբուհական կրթության ծառայությունների բաշխումը մեր կազմակերպության համար ամենամեծ հետաքրքրություն ներկայացնողներից մեկն է, քանի որ վերջին հաշվետվություններից մի քանիսում<sup>5</sup> փորձ է կատարվել վերլուծելու այն գործոնները, որոնք կարող են արդյունավետ կերպով օգտագործվել՝ պետության կողմից ֆինանսավորվող բարձրագույն և հետբուհական կրթության ծառայությունների անհավասարաչափ և «խտրական» բաշխումը բարելավելու նպատակով:

Ինչպես տեսնում ենք ստորև ներկայացված աղյուսակում, վերջին տարիների ընթացքում աղքատ և միջին քվինտիլներում (Ք2, Ք3 և Ք4) պատկերը որոշ չափով բարելավվել է (տես Գծապատկեր 4) ամենահարուստ քվինտիլի հաշվին (Ք5), սակայն առկա է ապշեցուցիչ անկում ծայրահեղ աղքատ քվինտիլում (տես Գծապատկեր 5):


<sup>5</sup> տես Ծախսերի Արդյունավետության Վերլուծություն և Քաղաքականության Մոդելավորման Հաշվետվություն (նախագիծ՝ 2013թ. փետրվարի 13-ի դրությամբ), ԱՍՏ, [www.ast.am](http://www.ast.am)

Գծապատկեր 4. Պետության կողմից ֆինանսավորվող բարձրագույն և հետբուհական կրթության ծառայությունների օգուտների բաշխումն ըստ քվինտիլների՝ 2008-2012թթ. ժամանակահատվածի համար



Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս նշված՝ մինչև 5% ծայրահեղ անկումը: Այն նաև ցույց է տալիս, որ ամենահարուստ քվինտիլի չափաբաժինը նույնպես նվազել է՝ 37%-ից իջնելով մինչև 33%:


Գծապատկեր 5. Բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, 2008-2012թթ.




Սա ապացուցում է, որ բարձրագույն և հետբուհական կրթության հասանելիության կախվածության նվազմանն ուղղված վերջին քաղաքականությունների նախաձեռնությունները (օրինակ՝ պետական բյուջեի ֆինանսավորման շահառուների

ցանկի վերանայում՝ կախված տարեկան առաջադիմությունից՝ միմիայն ընդունելության քննությունների վրա հիմնված՝ նախկինում կիրառվող մեխանիզմի փոխարեն, որտեղ ամենահարուստ քվինտիլների ուսանողներն ունեին մրցակցային առավելություն) որոշակի դրական ազդեցություն են ունեցել օգուտների բաշխման ընդհանուր մոդելի վրա: Սակայն, առաջին քվինտիլի նվազումը կարող է նշանակել, որ կառավարության քաղաքականություններն արդյունավետ էին միջին քվինտիլների համար (որոնք բարձրագույն կրթությանը մատչում ստանալուց հետո ապավինում են պետական աջակցության ձևերին), բայց ոչ՝ ամենաաղքատների համար (որոնք նույնիսկ չեն էլ փորձում ԲՈՒՀ-երին մատչում ստանալ): Այսպիսի եզրակացություն կատարվում է՝ ելնելով պետական բյուջեից ֆինանսավորվող բարձրագույն կրթության սխեմաներին մասնակցության՝ ըստ քվինտիլների բաշխման պատկերից, ինչպես նաև դրանց չմասնակցելու պատճառներից, որոնք բացահայտվել են 2012թ. հարցման արդյունքներով (տես Նկար 1-ում և Նկար 2-ում տրված համեմատությունը):

Նկար 2: Մասնակցությունը պետական բյուջեից ֆինանսավորվող բարձրագույն կրթության սխեմաներին



Նկար 1: Ֆինանսական պատճառներով չմասնակցողների բաշխումը



## Առողջապահություն

Սույն հաշվետվությունում փորձել ենք անդրադառնալ օգուտների բաշխման հնարավորինս շատ կողմերի: Մասնավորապես, փորձ է արվել գնահատելու և վերլուծելու ըստ քվինտիլների օգուտների բաշխման տարբերությունները ոչ միայն ՕԲՎ հաշվետվության պահանջների շրջանակներում, այլ նաև լրացուցիչ ասպեկտներում, ինչպիսիք են՝ դինամիկան, քաղաքային և գյուղական շրջանների միջև համեմատական բաշխումը և այլն:

Առողջապահության ոլորտի ամենաառանցքային ասպեկտներից մեկը երեխաների ծնունդների աջակցման ծրագիրն է և այն արտացոլված է ԱՄՏ-ի նախորդ հաշվետվություններում<sup>6</sup>, ինչպես նաև քաղաքականության մոդելավորման հաշվետվության նախագծում: Այս տեսանկյունից, ըստ քվինտիլների մինչծննդաբերական և ծննդաբերության ծառայությունների վերլուծությունը չափազանց կարևոր է դառնում և ԱՄՏ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունն՝ ընդհանուր առողջապահական ծառայությունների շարքում, առավել ուշադրությամբ է արտացոլել այդ հատուկ ասպեկտները: Ստորև ներկայացված է ծնունդների պարզ բաժանումն ըստ քվինտիլների և տարիների:


Աղյուսակ 5: Երեխաների ծնունդների մասով ՏՏ հարցման արդյունքները, %

Քվինտիլներ	2012	2010	2009	2008
1	35%	36%	26%	29%
2	24%	11%	17%	34%
3	19%	19%	23%	20%
4	13%	20%	24%	8%
5	9%	13%	10%	9%

Հետաքրքրական է, որ բերված տվյալներն անուղղակիորեն ապացուցում են վերը նշված՝ կրթության ոլորտում օգուտների չկանխամտածված բաշխումը աղքատներին, քանի որ ավելի աղքատ քվինտիլները ոչ միայն ունեն երեխաներին ուղղված ծառայությունների օգտագործման ավելի մեծ մասնաբաժին, այլև նման միտումներ են ապահովում նաև մոտ ապագայի համար: Սակայն, ինչպես ցույց են տալիս լրացուցիչ մանրամասները, հնարավոր է որոշ բարելավում՝ քվինտիլներում երեխաների ծնունդների հավասարակշռման առումով:


<sup>6</sup> Տես Օգուտների Բաշխման Վերլուծություն և Ծախսերի Արդյունավետության Վերլուծություն, [www.ast.am](http://www.ast.am)

Գծապատկեր 6: Օգուտների բաշխումը երեխաների ծնունդների ոլորտում, 2008-2012թթ.



2008-2010թթ. ծնունդների թիվն աճում է, մինչդեռ 2012թ. այս միտումը փոխվում է և նվազում: Երեխաների ծնունդների վերաբերյալ պաշտոնական տվյալները հասանելի են Ազգային վիճակագրական ծառայությունում (<http://www.armstat.am/file/doc/99471433.pdf>):

Գծապատկեր 7: Երեխաների ծնունդները 2007-2012թթ.



Այնուամենայնիվ, սույն հաշվետվության տեսանկյունից ավելի ուշագրավ է քվինտիլների ներքին դինամիկան: Ինչպես արդեն նշել ենք մեր նախկին հաշվետվություններում (տես [www.ast.am](http://www.ast.am)), երեխաների ծնունդների աճը «համընկել է» կառավարության քաղաքականության փոփոխության և 3-րդ և ավելի երեխաների ծնունդի դեպքում ընտանիքներին տրվող ավելի բարձր դրամական նպաստի ներդրման հետ: Այսպիսով, ֆինանսական աջակցության ծրագիրն իր դրական ազդեցությունն է ունեցել

ժողովրդագրական պատկերի վրա: 2012թ. անկումը, սակայն, կապված է տնտեսական ճգնաժամի և ժողովրդագրական անջրպետի խնդիրների հետ (1990-ական թթ. սկզբին երեխաների ծնունդների զգալի անկման ազդեցությունը համապատասխան տարիքի ծնողների թվի վրա):

Ամեն դեպքում, չնայած 2011թ. ծնունդների թվի անկմանը, 1-ին քվինտիլի մասնաբաժինն անցյալ մի քանի տարիներին աճել է, մինչդեռ 2-րդ քվինտիլում երեխաների ծնունդների թիվը 2008թ.-ից նվազել է: 2009թ. 2-րդ քվինտիլից վերև առկա է երեխաների ծնունդների նկատելի աճ, սակայն 2011թ. այդ մակարդակները հիմնականում հավասարվել են 2008թ. մակարդակին՝ բացառությամբ 3-րդ քվինտիլի, որտեղ 2011թ. երեխաների ծնունդների մակարդակը գերազանցել է 2008թ. մակարդակը: Միաժամանակ, հենց 2011թ. տեսնում ենք ծնունդների բաշխման միտումների տրամաբանական դինամիկա այն քվինտիլների ներսում, որտեղ հստակ ընդգծված է դեպի աղքատներն ուղղված օգուտների չկանխամտածված բաշխումը (1ք-35%, 2ք-24%, 3ք-19%, 4ք-13%, 5ք-9%):


Ինչպես վերը նշվել է, 2011 և 2012թթ. ծնունդների թվի նվազումը ցույց է տալիս, որ ներկա մակարդակով ֆինանսական քաղաքականությունն ինքնին կայուն լուծում չէ ժողովրդագրական խնդիրների համար: 2008-2010թթ. երեխաների ծնունդների աճը պայմանավորված է տնտեսության ընդհանուր առմամբ դրական միտումներով, մասնավորապես՝ այս ենթա-ուղորտի քաղաքականությունների գերակայության աճով: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության տվյալների, ծննդօգնության հետ կապված ծառայությունները զգալիորեն ավելի հասանելի են դարձել բնակչության բոլոր խավերին: Բնականաբար, եթե ֆինանսական ասպեկտները կարևոր գործոն հանդիսանային ընտանիքի պլանավորման հարցում, ապա մենք ականատես կլինեինք հակառակ միտումին, քանի որ նման քաղաքականության ազդեցությունն ավելի ցածր քվինտիլների վրա ամենաուժեղը կլիներ, սակայն կարելի է տեսնել, որ ամենալավ արձագանքը գրանցվել է միջին մակարդակում:

Ստորև ներկայացված գծապատկերն արտացոլում է բոլոր առողջապահական ծրագրերի ծառայությունների բաշխումն ըստ քվինտիլների: Ինչպես տեսնում ենք, ամբողջ ժամանակահատվածում առաջին և երկրորդ քվինտիլները ստանում են ավելին քան մյուսները, ինչը նշանակում է, որ պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայություններն ուղղված են դեպի աղքատները: Ինչպես նշել էինք նաև ՕԲՎ նախկին հաշվետվություններում, դրա պատճառների վերաբերյալ ամենավստահելի ենթադրություններից են հանդիսանում դեպի աղքատներն ուղղված հատուկ միջամտությունների փաթեթը (օրինակ՝ ամենախոցելի սոցիալական խմբերի համար առողջապահության ամբողջական ֆինանսավորում՝ ներառյալ այն խմբերը, որոնք իրավասու են օգտվել Ընտանեկան նպաստի ծրագրից<sup>7</sup>) և մասնավոր ու վճարովի առողջապահական ծառայություններից օգտվելու՝ ավելի հարուստ ընտանիքների նախընտրությունը:

<sup>7</sup> Ընտանեկան նպաստի ծրագիրը մոտ 100,000 աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների համար պետական նպաստների համակարգ է



Գծապատկեր 8: Առողջապահական ծառայությունների շահառուները 2008-2012թթ. ըստ քվինտիլների



Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ ամենախոցելի խմբերի (ամենացածր քվինտիլներ) շրջանում առկա է հիվանդացության շատ ավելի բարձր մակարդակ: Այսպիսի կարծիք են արտահայտել ոլորտի փորձագետները: Այդ իսկ պատճառով, ստանալով աղքատներին ուղղված քաղաքականությունների արդյունավետության և թիրախներին ուղղվածության բարձր մակարդակի վերաբերյալ վերը նշված ապացույցները, կառավարությունը նաև պետք է արձագանքի բերված կարծիքին՝ ներկայացնելով ավելի թիրախավորված քաղաքականությունների նախաձեռնություններ՝ խնդրին լուծում տալու նպատակով:

Աղյուսակ 6: Կառավարությունից ամբողջովին կամ մասնակի անվճար առողջապահական ծառայություններ ստացողների տեսակարար կշիռն ըստ քվինտիլների

	2012թ.	2010թ.	2009թ.	2008թ.
1	25%	23%	24%	22%
2	21%	21%	23%	22%
3	19%	21%	19%	18%
4	19%	20%	20%	21%
5	16%	15%	14%	16%

Վերևում բերված աղյուսակը ցույց է տալիս, որ անվճար և մասնակիորեն անվճար ծառայությունների՝ ըստ քվինտիլների շահառուների մասնաբաժինների առումով 2008 և 2012թթ. միջև նկատվում է փոքր տարբերություն:

Ստորև տրված աղյուսակներում ներկայացվում է 2012, 2010, 2009 և 2008թթ. ծառայությունների սպառման բաժանումն ըստ շահառուների քվինտիլների և ծառայությունների/ծրագրերի տեսակների:

Աղյուսակ 7: 2012թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի

Քվինտիլ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ
1	17%	34%	18%	65%
2	20%	21%	27%	4%
3	23%	18%	25%	4%
4	21%	16%	18%	0%
5	19%	11%	12%	26%

Աղյուսակ 8: 2010թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի տեսակների

Քվինտիլ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ
1	20%	15%	25%	19%
2	24%	29%	23%	16%
3	25%	13%	16%	50%
4	19%	7%	20%	6%
5	12%	35%	16%	9%

Աղյուսակ 9: 2009թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի տեսակների

Քվինտիլ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ
1	23%	24%	28%	13%
2	23%	31%	14%	33%
3	19%	12%	19%	17%
4	21%	24%	25%	21%
5	14%	10%	14%	17%


Աղյուսակ 10. 2008թ. օգուտների բաշխումն ըստ ծառայությունների/ծրագրերի

Քվինտիլ	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ
1	25%	19%	20%	0%
2	21%	43%	12%	33%
3	18%	5%	26%	13%
4	19%	29%	27%	38%
5	16%	5%	16%	17%

Ուսումնասիրված բոլոր տարիների դեպքում, օգուտների բաշխումն ըստ առողջապահական ծառայությունների ցույց է տալիս, որ ցածր քվինտիլները հարաբերականորեն բարձր մասնաբաժին ունեն կանխարգելող և բուժող բժշկական օգնության մասերով (օրինակ՝ առողջության առաջնային պահպանման, մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության և հիվանդանոցային ծառայություններ):

Ստորև տրված գծապատկերը ներկայացնում է բոլոր առողջապահական ծառայությունների ամբողջ սպառումն ըստ քվինտիլների և տարիների: Ակնհայտ է, որ առողջապահական համակարգի ծառայությունների սպառումն ուղղված է դեպի բնակչության ամենաաղքատ քվինտիլները, ինչն, ըստ փորձագետների մեկնաբանության, կապված է բնակչության խոցելի խմբերի առողջական ռիսկերի հետ: Այս առումով, կառավարության քաղաքականությունը պետք է կենտրոնացած լինի բնակչության այդ խմբերում առողջական ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Գծապատկեր 9: Առողջապահական ծառայությունների ընդհանուր սպառումն ըստ քվինտիլների, 2008-2012թթ.



Հարցումը տեղեկատվություն է տրամադրել նաև երկրում առողջապահական ծառայությունների մասնաբաժինների մեկ այլ հարթության վերաբերյալ:


Մասնավորապես, ծառայությունների սպառման ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է այն ոլորտներում, որոնք կառավարության կողմից հայտարարվել են գերակա, այսինքն՝ առողջության առաջնային պահպանման, հիվանդանոցային և ծնունդների/հղիության հետ կապված ծառայություններ: Այս բաժանման սահմաններում, բնակչությանը մատուցված ծառայությունների ամենաբարձր ցուցանիշները պատկանում են առողջության առաջնային պահպանմանը, ինչը լիովին համընկնում է առողջապահության ոլորտում կառավարության ամենամեծ առաջնահերթության հետ, այն է՝ հիվանդությունների կանխարգելում և բուժում սկզբնական փուլերում:

Աղյուսակ 11: Ծառայությունների սպառումն ըստ առողջապահական ծրագրերի, 2008-2012թթ.

Ծրագրեր	Ծրագրերի մասնաբաժինը ծառայությունների ընդհանուր սպառման մեջ			
	2012	2010	2009	2008
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	77.5%	84.3%	77.6%	79.0%
Մանկաբարձա-գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	16.7%	2.8%	4.6%	3.3%
Հիվանդանոցային ծառայություններ	5.3%	9.2%	15.0%	14.0%
Հանրային առողջապահական ծառայություններ	0.5%	1.3%	2.6%	3.7%
Հարբժշկական և այլ հարակից ծառայություններ	0.0%	2.3%	0.2%	0.0%

Ծառայությունների ընդհանուր սպառման մեջ ծրագրերի մասնաբաժինների ցուցանիշները ցույց են տալիս ծառայությունների կիրառման դեպքերի բաշխումն առողջապահական ծրագրերի միջև: Ամենակարևոր կետն այն է, որ առողջության առաջնային պահպանման ծառայությունների սպառման մասնաբաժինն այլ ծրագրերի համեմատ գերիշխող է, ինչը ցուցադրում է կառավարության քաղաքականության կենտրոնացումը կանխարգելիչ առողջապահական համակարգի ուղղությամբ: Ծառայությունների սպառման միտումը դիտարկելուց հետո կարելի է ենթադրել, որ տարիների ընթացքում առողջապահական ծառայություններն ավելի հասանելի են դառնում, ինչն այս ոլորտում կառավարության քաղաքականության ջանքերից մեկն է:

**Գծապատկեր 10: Անվճար կամ մասնակի անվճար առողջապահական ծառայությունների շահառուների մասնաբաժինն ըստ տարիների**



Վերլուծության ևս մեկ հարթություն է հանդիսանում ծառայությունների բաշխման ուսումնասիրությունն ըստ քաղաքային և գյուղական հատվածների: Դա նպատակ ունի գնահատել առողջապահության հասանելիության մակարդակը նշված երկու կատեգորիաներում, քանի որ այն նույնպես հանդիսանում է կառավարության քաղաքականության օրակարգային խնդիր:

Ծննդոգնության և անվճար կամ մասնակիորեն անվճար ծառայությունների բաշխումն ըստ քաղաքային և գյուղական հատվածների ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Վերջինս ցույց է տալիս, որ ծառայություններ ստացողների մեծ մասը քաղաքային է, սակայն նույնպիսին է նաև բնակչության ընդհանուր բաշխվածությունը: Ընդհանուր դիտարկումն այն է, որ կառավարության ծննդոգնության և առողջապահական ծառայությունների բաշխումն ըստ գյուղական և քաղաքային հատվածների արտացոլում է երկրի ընդհանուր պատկերը: Միաժամանակ, հետաքրքիր շրջադարձ է տեղի ունեցել 2012թ., երբ գյուղական հատվածներում ծնունդների թիվը գերազանցել է քաղաքային հատվածի ցուցանիշը՝ կազմելով 53%՝ քաղաքային հատվածի 47%-ի համեմատ:

Այսպիսով, չնայած փորձագիտական շրջանակները պնդում են, որ առկա է ծառայությունների միգրացիա դեպի քաղաքային հատվածներ, հարցումն այնուամենայնիվ չապացուցեց այդ փաստը, համենայնդեպս՝ առողջապահական ծառայությունների ընդհանուր մակարդակի համար:

**Աղյուսակ 12: Ծառայությունների սպառման մասնաբաժինն ըստ քաղաքային և գյուղական հատվածների**

Քաղաքային/ Գյուղական	Հարցվածների մասնաբաժինը				Ծնունդների մասնաբաժինը				Անվճար կամ մասնակի անվճար առողջապահական ծառայությունների շահառուների մասնաբաժինը			
	2012	2010	2009	2008	2012	2010	2009	2008	2012	2010	2009	2008
Քաղաքային	59%	61%	62%	62%	47%	61%	64%	56%	62%	65%	60%	63%
Գյուղական	41%	39%	38%	38%	53%	39%	36%	44%	38%	35%	40%	37%

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ծառայությունների շահառուների թվի աճ և՛ քաղաքային և՛ գյուղական հատվածներում՝ միաժամանակ ընդգծելով շահառուների թվի ավելի մեծ աճը քաղաքային բնակավայրերում: Այս ցուցանիշները վկայում են, որ կառավարությանն անհրաժեշտ է շարունակել իր քաղաքականությունն՝ ուղղված ամբողջ երկրում առողջապահական ծառայությունների և հնարավորությունների հավասարաչափ զարգացմանը:

**Աղյուսակ 13: Հարցվածների շրջանում ծառայությունների շահառուների մասնաբաժնի բաշխումն ըստ քաղաքային և գյուղական հատվածների**

Քաղաքային /Գյուղական	Ծնունդների մասնաբաժինը				Անվճար կամ մասնակի անվճար առողջապահական ծառայությունների շահառուների մասնաբաժինը			
	2012	2010	2009	2008	2012	2010	2009	2008
Քաղաքային	1.0%	1.4%	1.1%	1.2%	16.8%	12.2%	13.1%	9.4%
Գյուղական	1.7%	1.4%	1.0%	1.6%	14.9%	9.9%	14.2%	9.3%

**Աղյուսակ 14: Ծառայությունների բաշխումն ըստ ծրագրերի և քվինտիլների, 2008-2012թթ.**

	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	Հիվանդանոցային ծառայություններ	Հանրային առողջապահական ծառայություններ
<b>2012</b>				
Քաղաքային	67%	58%	59%	91%
Գյուղական	33%	42%	41%	9%
<b>2010</b>				
Քաղաքային	55%	57%	63%	69%
Գյուղական	45%	43%	38%	31%
<b>2009</b>				
Քաղաքային	60%	74%	51%	71%
Գյուղական	40%	26%	49%	29%
<b>2008</b>				
Քաղաքային	61%	86%	51%	54%
Գյուղական	39%	14%	49%	46%

Բավականին հետաքրքիր է, որ, ի տարբերություն կառավարության կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարվող ծառայությունների, տնային տնտեսությունների սեփական ծախսերն առողջապահության վրա զգալիորեն ավելի բարձր են՝ 4-րդ և 5-րդ քվինտիլներում (միջինում, ծախսերի մոտ 75%-ը կատարվում է բնակչության 40%-ի կողմից): Այս բացահայտումը մասնակիորեն նվազեցնում է վերը նշված փորձագիտական ենթադրությունն առ այն, որ ամենաաղքատ հատվածներն ունեն առողջապահության հետ կապված խնդիրների զգալիորեն ավելի բարձր մակարդակ: Համեմայնդեպս, տնային տնտեսությունների սեփական ծախսերի աղյուսակը ցույց է տալիս, որ երկու ամենաբարձր քվինտիլներում նույնպես առկա է առողջապահական խնդիրներին ֆինանսական արձագանքների մեծ բաժին: Կարող է պարզվել, որ երկու ամենաբարձր քվինտիլները հիմնականում նախընտրում են վճարովի ծառայությունները՝ դրանց պոտենցիալ ավելի բարձր որակի պատճառով:

Որոշ առողջապահական ծառայությունների դեպքում, սակայն, դրանց անվճար սպառումը հասանելի է միմիայն ամենաաղքատ քվինտիլների ներկայացուցիչներին (շնորհիվ հատուկ աղքատներին ուղղված քաղաքականության, որը ծառայությունների լրացուցիչ փաթեթ տրամադրեց Ընտանեկան նպաստի ծրագրի շահառուներին, որն իր հերթին աղքատության կրճատմանն ուղղված՝ կառավարության առաջնային և ամենաթանկ ծրագիրն է պետական բյուջեում) և դա կարող է նույնպես գործոն հանդիսանալ՝ Հայաստանում առողջապահական ծառայությունների՝ դեպի աղքատներն այդչափ բարձր ուղղվածության համար: Այս մոտեցմանն օժանդակում են այն տվյալները, համաձայն որոնց տնային տնտեսությունների սեփական ծախսերի մեծամասնությունը վճարվում են հիվանդանոցային ծառայությունների համար (չնայած, շահառուների թիվը զգալիորեն ավելի բարձր է առողջության առաջնային պահպանման ծառայություններում):

Ամեն դեպքում, չնայած նրան, որ առողջապահական օգուտների բաշխման ընդհանուր մոդելը միտված է դեպի աղքատները, սակայն ոլորտը բավականին բարդ է և կառավարությունը պետք է նախաձեռնողական կերպով արձագանքի առողջապահական ծառայությունների սոցիալական ասպեկտների մարտահրավերներին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է բյուջեի ծախսերի հատկացումն ըստ քվինտիլների:

**Աղյուսակ 15: Բյուջեի հատկացումներն ըստ քվինտիլների և տարիների**

Քվինտիլներ	Բյուջեի հատկացում (%)				
	2008	2009	2010	2011	2012
1	21%	24%	21%	21%	23%
2	22%	22%	24%	24%	22%
3	19%	18%	21%	21%	22%
4	24%	23%	16%	17%	18%
5	15%	14%	17%	17%	16%

Բյուջեի հատկացումն ըստ քվինտիլների հաշվարկված է՝ հիմնվելով ուսումնասիրված տարիների համար ըստ ծառայությունների/ծրագրերի տեսակների օգուտների բաշխման մասնաբաժինների վրա: Հաշվարկված ցուցանիշները արտացոլում են պետական բյուջեի ուղղվածությունը դեպի աղքատները և երկրում աղքատության կրճատմանն ուղղված կառավարության քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, կառավարությունը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի գյուղական և քաղաքային հատվածներում առողջապահական համակարգի հավասարաչափ զարգացմանը և բարձրացնի ծառայությունների հասանելիությունը բնակչության խոցելի խմբերի համար՝ ավելացնելով այդ խմբերի առողջապահական կարիքներին ուղղված բյուջեի հատկացումները և բարելավելով քաղաքականության միջամտությունների փաթեթը:

## Ջրային տնտեսության ոլորտ

Տնային տնտեսություններում խմելու ջրի միջին սպառումը 2008թ. կազմում էր ամսական 1695 ՀՀ դրամ կամ ՏՏ ընդհանուր ծախսերի 1.08%: 2012թ. այն հասավ ամսական 2336 ՀՀ դրամի կամ ամսական ծախսերի 0.9%-ին: Միաժամանակ, ոռոգման վրա կատարվող միջին ծախսերը 2008թ. կազմում էին 866 ՀՀ դրամ կամ 0.5%:

Աղյուսակ 16: Ջրային ծառայություններից օգտվողների տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության մեջ՝ ըստ ջրային ծառայությունների տեսակների և ծախսային քվինտիլների, 2008թ.

	1	2	3	4	5
Ջրամատակարարման համակարգ	86.9	90.3	90.9	93.8	95.3
Ջրահեռացման համակարգ	74.4	70.9	74.4	74.1	78.4
Ոռոգման համակարգ	22.2	27.8	26.6	24.4	24.4

Աղյուսակ 17. Ջրային ծառայությունների տեսակների օգուտների բաշխումն ըստ քվինտիլների, 2008թ.

	1	2	3	4	5
Ջրամատակարարման համակարգ	19	19.8	19.9	20.5	20.8
Ջրահեռացման համակարգ	20	19	20	19.9	21.1
Ոռոգման համակարգ	17.7	22.1	21.2	19.5	19.5

Համաձայն բյուջետավորման մասին տեղեկատվության, կառավարությունն ամենաշատ ներդրումները կատարել է խմելու ջրամատակարարման և ոռոգման համակարգերում: Սակայն ոռոգման համակարգից օգտվող բնակչության մասնաբաժինը բավական փոքր է (ամենափոքրը ջրային ոլորտի ծրագրերի մեջ) և կազմում է ընդամենը 25%: Միաժամանակ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այս ծրագրի շահառուների մեծ մասը ներկայացնում են 2-րդ և 3-րդ քվինտիլները, ինչը և՛ դրական է և՛ բացատրելի:


Ներդրումների ամենափոքր չափաբաժինը կատարվել է կոյուղու (ջրահեռացման) համակարգերում, չնայած այն փաստին, որ տնային տնտեսությունների 74.4%-ը նշել են, որ հանդիսանում են ջրահեռացման համակարգի օգտագործողներ:

Ծառայությունների սպառման տեսանկյունից ամենամեծ մասնաբաժինը խմելու ջրի մատակարարման ոլորտում է՝ 91.4% 2008թ.-ին, որը հետագայում իջել է՝ 2012թ.-ին հասնելով 89.8%:

Օգուտների բաշխման մոդելներն ըստ ծրագրերի բավականին տարբերվում են: Ըստ քվինտիլների արագ աճը և հետագա դանդաղ նվազումը տրամաբանական է, քանի որ սա բնակչության այն հատվածն է, որը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ (ցածր միջին և միջին քվինտիլներ):




Գծապատկեր 11: Ոռոգման օգուտների բաշխում




Ջրահեռացման ծրագրում առկա օգուտի բաշխման մոդելը վերլուծության տվյալ փուլում դժվար է բացատրել: Փաստացի, այս ծրագիրը համեմատաբար ցածր գերակայություն ունի և դժվար կլինի ռեսուրսներ ներդնել՝ Հայաստանում օգուտների բաշխման նման վարքի պատճառը հիմնավորելու և գոյություն ունեցող քաղաքականությունների փոփոխություն խորհուրդ տալու համար:

Գծապատկեր 12: Ջրահեռացման օգուտների բաշխում



Ամենահետաքրքիր մոդելն արձանագրվել է խմելու ջրի մատակարարման ծրագրի համար: Իսկ ամենակարևոր բացահայտումը ոչ թե օգուտի բաշման մոդելն է (այն փաստացի ակնկալվում էր մեր թիմի կողմից), այլ՝ դրանից բխող եզրակացությունները կամ առաջարկությունները:

**Գծապատկեր 13: Զրամատակարարման ծառայություններին մատչումի դինամիկան ըստ քվինտիլների, 2008-2012թթ.**



Նկատելի է, որ խմելու ջրամատակարարմանը մատչումով 2008-2012թթ. զգալի շարժեր չեն գրանցվել. տնային տնտեսությունների ընդհանուր մասնաբաժինները յուրաքանչյուր քվինտիլում մնացել են անփոփոխ: Ք1-ի և Ք5-ի միջև տեղի է ունեցել 0.8 տոկոսային կետի փոխանակում: Առաջին քվինտիլի աճը կարող է բացատրվել ջրամատակարարման ոլորտում իրականացված լայնածավալ հանրային ներդրումների ծրագրերով, որը նպաստել է նախկինում չմիացված ամենաաղքատ տնային տնտեսությունների միացմանը խմելու ջրի մատակարարման համակարգին: Մյուս կողմից, Ք5-ում միացումների նվազումը հարցման արդյունքներով չի կարող բացատրվել: Ենթադրություններից մեկը կարող է լինել այն, որ նոր տներ գնելիս/կառուցելիս հարուստ տնային տնտեսությունները նախընտրում են ունենալ իրենց սեփական ջրամատակարարման աղբյուրը՝ համակարգին միանալու փոխարեն:

Վերը նշված բոլոր ենթա-ոլորտներում սուբսիդավորում ունենալու գաղափարը հիմնավորվում է մասնավոր շահագործող ընկերությունների եկամուտների դեֆիցիտը փոխհատուցելու՝ կառավարության անհրաժեշտությամբ, ինչը պայմանավորված է մատուցվող ծառայությունների գների/վճարների շուկայականից ավելի ցածր լինելու հանգամանքով: Իսկ կառավարության կողմից ցածր գներ սահմանելու հիմնավորումը (որպես հիմնական նպատակ) ամենաաղքատ տնային տնտեսություններին աջակցելն է՝ բարձր կենսամակարդակի համար անհրաժեշտ նորմալ ծավալներով հատուկ ծառայություններ ստանալու համար: Երկրորդական նպատակ կարող է հանդիսանալ մասնավոր ընկերություններին շահագրգռելը կամ ստիպելը՝ կիրառել ստանդարտ գների քաղաքականություն ողջ երկրի համար՝ անկախ յուրահատուկ ռեզիդուալ տարբերություններից և ներդրումային կարիքներից: Օգուտների բաշման

վերլուծությունից տեսնում ենք, որ կառավարությունը փաստորեն չի կիրառում սուբսիդիաների օգտագործման առաջին հիմնավորումը, այսինքն՝ ամենաաղքատ ընտանիքներին աջակցությունը: Վերը ներկայացված մոդելը ցույց է տալիս, որ բնակչության ավելի հարուստ քվինտիլները, փաստացի, սուբսիդավորման սխեմայից ստանում են ավելին, քան ամենաաղքատները: Այսպիսով, սուբսիդավորվող ջրամատակարարման համակարգ ունենալու ողջ գաղափարը հակառակն է շրջվել և բնակչության բոլոր հատվածներից հավաքագրված հարկերը հետ են բաշխվում նրանց բոլորին, սակայն հարուստ հատվածներին ավելի շատ է բաժին ընկնում:

Զարգացումները 2009-2012թթ. ժամանակահատվածում

Ստորև բերված աղյուսակում պատկերված է միավորի սուբսիդավորման փոփոխությունը 2008- 2012թթ. ուսումնասիրություններում:

Աղյուսակ 18. Միավորի սուբսիդավորման դինամիկան 2008-2012թթ.

Ջրային տնտեսության ոլորտ	2008		2009		2012	
	Միավորի սուբսիդավորում (հազար դրամ)	Միավորի սուբսիդավորում ԱՄՆ դոլար <sup>8</sup>	Միավորի սուբսիդավորում (հազար դրամ)	Միավորի սուբսիդավորում ԱՄՆ դոլար	Միավորի սուբսիդավորում (thousands AMD)	Միավորի սուբսիդավորում ԱՄՆ դոլար
Ջրամատակարարման համակարգ	2.73	9	4.34	11.9	5.48	13.7
Ջրահեռացման համակարգ	0.23	1	0.79	2.2	2.22	5.5
Ոռոգման համակարգ	4.26	14	4.75	13.1	5.44	13.6

Քվինտիլներում դրամային օգուտների բաշխումը կարելի է ստանալ հիմնվելով օգուտների բաշխման մակարդակների (ինչպես գնահատվել է հարցման միջոցով) և յուրաքանչյուր ենթա-ոլորտում կառավարության կողմից վճարված փաստացի օգուտների վրա: Ստորև ներկայացված երկու աղյուսակներում ամփոփված են այդ հաշվարկները 2008, 2009 և 2012թթ. համար:

<sup>8</sup> Կիրառված արտարժույթի փոխարժեքը. 2008թ. 1 ԱՄՆ դոլար = 303.33 ՀՀ դրամ, 2009թ. 1 ԱՄՆ դոլար = 364.7 ՀՀ դրամ և 2012թ. ԱՄՆ դոլար = 400 ՀՀ դրամ:

Աղյուսակ 19: Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2008թ.

	1	2	3	4	5
Ջրամատակարարման համակարգ	1,419,127.2	1,465,236.1	1,490,852.1	1,531,837.7	1,562,576.9
Ջրահեռացման համակարգ	34,901.7	33,288.6	34,901.7	34,901.7	36,808.1
Ոռոգման համակարգ	1,695,806.8	2,125,729.7	2,006,306.7	1,839,114.5	1,862,999.1
Ընդամենը	3,149,835.8	3,624,254.4	3,532,060.5	3,405,853.9	3,462,384.1
Ընդհանուր օգուտների բաշխում, %	18.3%	21.1%	20.6%	19.8%	20.2%

Աղյուսակ 20: Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2009թ.

	1	2	3	4	5
Ջրամատակարարման համակարգ	2,257,550.6	2,330,900.7	2,371,650.7	2,436,850.7	2,485,750.7
Ջրահեռացման համակարգ	120,580.2	115,007.2	120,580.2	120,580.2	127,166.5
Ոռոգման համակարգ	1,889,150.5	2,368,090.0	2,235,051.3	2,048,797.0	2,075,404.8
Ընդամենը	4,267,281.3	4,813,997.9	4,727,282.2	4,606,227.9	4,688,322.0
Ընդհանուր օգուտների բաշխում, %	18.5%	20.8%	20.5%	19.9%	20.3%

Աղյուսակ 21: Ջրային ոլորտի գծով ծախսերի օգուտների բաշխումն (ՀՀ դրամ) ըստ ծախսային քվինտիլների և ծրագրերի (4W), 2011թ.

	1	2	3	4	5
Ջրամատակարարման համակարգ	3,027,666.4	2,953,302.6	3,091,406.7	3,133,900.3	3,059,536.6
Ջրահեռացման համակարգ	342,959.3	325,811.3	342,959.3	341,244.5	361,822.1
Ոռոգման համակարգ	2,223,824.7	2,776,639.9	2,663,564.1	2,449,976.4	2,449,976.4
Ընդամենը	5,594,450.4	6,055,753.9	6,097,930.1	5,925,121.2	5,871,335.0
Ընդհանուր օգուտների բաշխում, %	18.94%	20.50%	20.64%	20.05%	19.87%

Աղյուսակ 22: Օգուտների բաշխումը 2008-2012թթ.


	1	2	3	4	5
2008թ.	18.3%	21.1%	20.6%	19.8%	20.2%
2009թ.	18.5%	20.8%	20.5%	19.9%	20.3%
2012թ.	18.94%	20.50%	20.64%	20.05%	19.87%

Ինչպես արդեն նշվել է, ջրային ոլորտի օգուտները հարաբերականորեն հավասարաչափ են բաշխված եկամտային քվինտիլների միջև: Հիմնական բացառությունը կամ շեղումը նկատվում է ոռոգման ոլորտում: Մա, իհարկե, ենթադրում է, որ այս ոլորտին

տրամադրվող գումարի ավելացումը կհանգեցնի բաշխման անհավասարաչափության աճին և հակառակը: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ յուրաքանչյուր քվինտիլին բաժին ընկնող օգուտների մասնաբաժինը (ծառայություններին ֆիզիկական մատչումի առումով<sup>9</sup>) մոտ է 20%-ին:

2008, 2009 և 2012թթ. տվյալների վերլուծության առումով, կարելի տեսնել թույլ միտում դեպի օգուտների բաշխման աղքատներին ավելի մեծ ուղղվածություն: Մասնավորապես, ամենացածր քվինտիլին բաժին ընկնող օգուտների մասնաբաժինն աճել է 2008թ. գրանցված 18.3%-ից մինչև 18.5%՝ 2009թ. և 18.94%՝ 2012թ.: Չնայած նրան, որ փոփոխությունները և տեղաշարժերը բավականաչափ զգալի չեն՝ որակական փոփոխություն ներկայացնելու համար, սակայն կարելի է նշել, որ «բարելավումը» տեղի է ունեցել 2-րդ և 5-րդ քվինտիլների հաշվին: Հետաքրքիր է, որ 4-րդ քվինտիլի մասնաբաժինը ևս մի փոքր աճել է, մինչդեռ ամենաբարձր՝ 5-րդ քվինտիլինը նվազել է մոտ 0.3 տոկոսային կետով: Սրա բացատրությունը, որը կարելի ստանալ այս պահին, այն է, որ ամենահարուստ տնային տնտեսությունները ձգտում են հույսը դնել իրենց սեփական ջրի աղբյուրների վրա՝ կենտրոնացված համակարգերին միանալու փոխարեն: Ցավոք, ներկա փուլում այս եզրակացությունը հնարավոր չէ ստուգել կամ հաստատել: Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է բաշխման մոդելները 2008, 2009 և 2012թթ. համար:

Գծապատկեր 14: Ջրային ոլորտի բյուջետային ծրագրերի օգուտների բաշխումը 2008-2012թթ.



<sup>9</sup> Ծառայությունների փաստացի սպառման առումով օգուտների բաշխման մոդելը վերլուծված է սույն փաստաթղթի հաջորդ բաժիններում և, փաստացի, հանդիսանում է ջրային ոլորտում քաղաքականությունների խնդրի կորիզը:

Որպես եզրակացություն կարելի է նշել 2-րդ և 5-րդ քվինտիլների հաշվին տեղի ունեցած թեթև «բարելավումը» դեպի աղքատներին ուղղված քաղաքականություն: Ձուգահեռաբար, ջրային տնտեսության ոլորտին հատկացվող ընդհանուր սուբսիդիաների չափն աճել է՝ 7.5 մլրդ. ՀՀ դրամից հասնելով 29.5 մլրդ. ՀՀ դրամ: Ձրահեռացման ենթա-ոլորտին հատկացվող միջոցները դեռևս ցածր են մնում՝ 1.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ խմելու ջրամատակարարման և ոռոգման ենթա-ոլորտներին հատկացումները կազմում են համապատասխանաբար 15.2 մլրդ ՀՀ դրամ և 12.6 մլրդ ՀՀ դրամ:

Այս համարյա հավասար բաշխումը, սակայն, արտացոլում է միայն ջրամատակարարման համակարգերին մատչումը և չի արտացոլում քվինտիլների միջև օգուտների բաշխման տատանումները՝ համակարգի «օգտագործման» տեսանկյունից, կամ, փաստորեն, SS կողմից ջրի փաստացի սպառումը: Դա գնահատելու համար օգտագործվել են ԱՄՏ-ի վերջին տարիների սեփական հարցումների տվյալները. առաջինը հաշվարկվել են բոլոր հարցվող SS համար մեկ շնչի հաշվով վճարումները, իսկ հետո մեկ շնչի հաշվով սպառումը գնահատվել է՝ ելնելով մեկ շնչի հաշվով վճարումներից<sup>10</sup>: Հիմնվելով մեկ շնչի հաշվով սպառման գնահատականների վրա՝ օգուտների բաշխման պատկերը փոխվում է՝ ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում.


Աղյուսակ 23: Օգուտների բաշխման դինամիկան (ծառայությունների սպառում), 2008-2012թթ.

	1	2	3	4	5
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2008թ.	9.6%	13.2%	17.0%	23.6%	36.6%
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2010թ.	10.6%	14.2%	17.5%	20.9%	36.8%
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2012թ.	10.16%	14.01%	18.86%	24.15%	32.82%

Կարելի է տեսնել, որ, չնայած բոլոր 5 քվինտիլներում համակարգի մատչումի հարաբերականորեն համամասնական բաշխմանը, ամենաաղքատ SS շատ ավելի քիչ օգուտ են ստանում ջրամատակարարման ոլորտում կառավարության ծախսային ծրագրերից՝ քան նրանց 20% մասնաբաժինը:

<sup>10</sup> Ձրամատակարարման սակագները սահմանվում են յուրաքանչյուր տարվա ապրիլ-հունիս ամիսներին, այդ իսկ պատճառով՝ պարզության նպատակներից ելնելով, մեկ շնչի հաշվով սպառման գնահատման համար օգտագործվել է բոլոր 5 ջրամատակարար ընկերությունների միջին սակագինը: Քանի որ 5 ջրամատակարար ընկերությունների սակագները զգալիորեն չեն տարբերվում իրարից և գտնվում են մեկ խորանարդ մետրի դիմաց 172-202 ՀՀ դրամ հարաբերականորեն նեղ միջակայքում, ապա դրա արդյունքում առաջացող սխալն օգուտների բաշխման վերլուծության վրա զգալի ազդեցություն չի ունենա:

Գծապատկեր 15: Օգուտների բաշխումը՝ հիմնված մեկ շնչի հաշվով ջրի սպառման վրա, 2008-2012թթ.



2008-2012թթ. ընթացքում ընդհանուր պատկերը զգալիորեն չի փոխվել: Սակայն, 2008-2012թթ. միջև առկա է բաշխման թեթև բարելավում՝ ամենաբարձր քվինտիլում օգուտների բաշխման մոտ 4 տոկոսային կետով նվազման առումով: 2010թ. համեմատությամբ, ամենացածր երկու քվինտիլներում 2012թ. գրանցվել են աննշան նվազումներ՝ հաջորդելով 2010թ.-ի 1 տոկոսային կետով աճին յուրաքանչյուր քվինտիլում: Միաժամանակ, 2012թ.՝ 2008թ. համեմատությամբ, տեսանելի է թեթև բարելավում (0.5 տոկոսային կետ՝ ամենացածր քվինտիլում և 0.8 տոկոսային կետ՝ երկրորդ քվինտիլում): 2008-2012թթ. ընթացքում օգուտների բաշխումը երրորդ քվինտիլում կայուն կերպով աճել է, մինչդեռ 4-րդ քվինտիլում այն աճել է 0.5 տոկոսային կետով (2008-2010թթ. գրանցված՝ մոտ 3 տոկոսային կետով անկումից հետո): Ընդհանուր առմամբ, մեկ շնչի հաշվով ջրի սպառման առումով օգուտների բաշխումը չափազանց անհավասար է. Քվինտիլ 5-ը սպառում է 3 անգամ ավելի շատ ջուր քան Քվինտիլ 1-ը, այդպիսով կառավարության սուբսիդիաներից ստանալով 3 անգամ ավելի շատ օգուտներ քան ամենաաղքատ տնային տնտեսությունները: Քվինտիլ 4-ի և Քվինտիլ 1-ի միջև տարբերության գործակիցը մոտ 2.5 անգամ է: Մյուս կողմից, Քվինտիլ 5-ում օգուտների բաշխման նվազումը չեզոքացվել է Քվինտիլ 3-ում և 4-ում օգուտների բաշխման աճով: